# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՑՔԱՆՕ» (ՆԱՔԱՐԹՅԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 39 - 40 (16638) ՇԱԲԱԹ, 19 ՄԱՅԻՍԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՆԱՏՕ-Ի ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Մայիսի 14-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու նախագահությամբ անցկացված ազգային անվտանգության խորհրդի նիստում, քննարկվեցին երկրում ընթացիկ աշխարհաքաղաքական գործընթացները, անվտանգության ու պաշտպանության հարցերը:*



Անվտանգության խորհրդի նիստի աշխատանքին մասնակցեցին երկրի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, ՆԳ նախարար Գիորգի Գախարիան, արտաքին հետախուզական ծառայության ղեկավար Դավիթ Սուջաշվիլին, անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրին, անվտանգության խորհրդի մյուս անդամները:

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՁԵՎԱՎՈՐՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*Ավարտվեց Հայաստանի նոր կառավարության ձեւավորման գործընթացը: Գործադիր իշխանության բարձրագույն մարմնի նախարարների նշանակումը իրականացվում է Հայաստանի վարչապետի առաջադրմամբ եւ Հայաստանի նախագահի հրամանագրով:*



Հիշեցնենք, որ Հայաստանի Ազգային ժողովը մայիսի 8-ին, երկրորդ փորձից հետո, օրենսդիր մարմնի հատուկ նիստում կայացած անվանական, բաց քվեարկությամբ, «Ելք» խմբակցության ղեկավար, Ազգային ժողովի 35 պատգամավորների կողմից վարչապետի թեկնածու առաջադրված Նիկոլ Փաշինյանին՝ 59 կողմ եւ 42 դեմ ձայներով, ընտրեց Հայաստանի վարչապետ:

Նոր վարչապետի ընտրությունը հանգեցրեց գործադիր իշխանության նախկին կազմի պաշտոնաթողությանը: Ստորեւ ներկայացնում ենք վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջադրմամբ եւ նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրով նշանակված նախարարներին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ



*Մայիսի 17-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ ԱՄՆ-ի եվրոպական ռազմակայանի ղեկավար, ՆԱՏՕ-ի դաշնակից ուժերի գերագույն հրամանատար, գեներալ Կուրթ Սկապարոտի հետ:*

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստան-ԱՄՆ ռազմավարական գործընկերության, երկրի եվրոպական եւ եվրատլանտ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ԿԱՅԱՑԱՎ ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵԻ ԵՎ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Մայիսի 16-ին Վրաստանի ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:*



Հանդիպմանը քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Հանդիպմանը Մամուկա Բախտաձեն նշեց, որ երկու երկրներն էլ պետք է հատուկ ուշադրություն դարձնեն առեւտրական հարաբերություններին, որոնք պետք է բարձրացվեն երկու երկրների միջեւ եղած ջերմ հարաբերությունների մակարդակին: Նա կարեւորեց նաեւ Մեղրիի ազատ տնտեսական գոտու նշանակությունը՝ ընդգծելով, որ դա մեծ ներուժ ունեցող նախագիծ է:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

## ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՐԲԵՔ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՅՍՔԱՆ ԱԶԱՏ ՉԻ ԵՂԵԼ»



*Ինչպես արդեն հաղորդել ենք, մայիսի 11-ին, Թբիլիսիում՝ Մթածմինդայի զբոսայգու «Անտերվիլե» սրահում, անցկացվեց «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության արտահերթ հինգերորդ նիստը, որը քննարկեց կազմակերպչական հարցեր, նորացրեց կուսակցության քաղխորհրդի կազմը: Համագումարի պատգամավորները միաձայն կուսակցության նախագահ ընտրեցին կազմակերպության հիմնադիր Բիձինա Իվանիշվիլուն: Համագումարին, Բիձինա Իվանիշվիլու 31 անգամ ծափահարություններով ընդհատված 25 րոպեանոց ելույթում, նորընտիր նախագահը պատգամավորներին ներկայացրեց առաջիկա ծրագրերն ու առաջնահերթությունները:*

### ԱՅՍՕՐ, ԱՎԵԼԻ ՔԱՆ ԵՐԲԵՎԷ, ԲԻԶՆԵՍՆ ԱԶԱՏ Է ՈՒ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ

Այսօր, Վրաստանում լրիվությամբ պաշտպանված եւ անձեռնմխելի է սոցիալական կարեւոր ինստիտուտներից մեկը, մարդու իրավունքների զարգացման գլխավոր հիմքը՝ մասնավոր սեփականությունը, որը նախորդ իշխանության օրոք ոտնա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ, ԻՍԿ 28-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 100-ԱՄՅԱԿՆ Է

## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ



*2018 թվականի մայիսի 26-ին Վրաստանը, իսկ 28-ին Հայաստանը նշում են պետականության վերականգնման եւ առաջին ժողովրդավարական հանրապետությունների կազմավորման 100-ամյա հոբելյանները:*

*Ռուսաստանում 1917 թվականի փետրվարյան եւ ապա՝ հոկտեմբերյան հեղափոխություններից հետո կազմալուծված Ռուսաստանի կայսրության կազմից Ֆինլանդիայի, Մերձբալթյան երկրների հետ միասին դուրս եկան նաեւ Անդրկովկասյան երկրները: Այս տարածքում սկզբում կազմավորվեց Անդրկովկասյան կոմիսարիատը, յուրատեսակ դաշնային պետություն՝ Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի կազմով: Սակայն դաշնային սուբյեկտների միջեւ առկա հակադիր շահերի, տարածայնությունների պայմաններում նորակազմ պետությունը արդեն 1918 թվականի մայիսին փլուզվեց: Առաջինը իր պետական անկախությունը հռչակեց Վրաստանը: Թբիլիսիում, Ռուսաստանի Կովկասյան փոխարքայի նստավայրում (ներկայումս Թբիլիսիի սովորող երիտասարդների պալատում), մայիսի 26-ին ստորագրվեց Վրաստանի պետական անկախության վերականգնման հռչակագիրը: Մայիսի 28-ին պետական անկախության վերականգնման հռչակագրեր ստորագրեցին նաեւ Հայաստանի Ազգային խորհուրդը եւ Ադրբեջանի մեջլիսը:*




*Վրաստանի առաջին հանրապետության եւ Հայաստանի առաջին հանրապետության կազմավորման 100-ամյա հոբելյանի կապակցությամբ, ստորեւ ներկայացնում ենք հոդված Վրաստանի եւ Հայաստանի պետական խորհրդանիշների վերաբերյալ:*

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ Է»



***Մայիսի 16-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Վրաստանի պետական անկախության վերականգնման 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում, Վրաստանի բժշկական համալսարանում հանդիպում ունեցավ ուսանողների հետ:***

Հանդիպմանը նախագահը խոսելով Վրաստանի առաջին հանրապետության մեկդարյա հոբելյանի պատմական նշանակության մասին, անդրադարձավ նաեւ վրաց-ռուսական հարաբերությունների թեմային եւ հայտարարեց, որ Ռուսաստանի հետ երկխոսությունը հիմնախնդիրների կարգավորման ամենաիրատեսական ուղին է: Գիորգի Մարգվելաշվիլու խոսքով, Վրաստանի իշխանությունները Ռուսաստանին առաջարկում են իրատեսական երկխոսություն: «Միշտ ասում եմ, որ երազում եմ այն օրը, երբ Ռուսաստանի նախագահի հետ կզրուցեմ, ոչ թե նրա իմիջից, այլ այն շահերից ելնելով, որ բխում է յուրաքանչյուր ռուս ընտանիքի հետաքրքրությունից: Մենք Ռուսաստանին առաջարկում ենք երկխոսություն՝ հիմքում ունենալով Ռուսաստանի քաղաքացիների շահը եւ այդ շահի ազդեցությունը: Եվ մենք նրանց առաջարկում ենք բարիդրացիություն այն պահից, երբ կվերադարձվեն Վրաստանի բռնազավթված տարածքները:

Նախագահի խոսքով, Ռուսաստանի հետ հարաբերությունները վրաց հասարակայնությանը չեն բաժանել երկու տարբեր ճամբարների: «Վրաց հասարակայնությունը պատրաստ է՝ խոսել Ռուսաստանի հետ: Եվ ես պատրաստ եմ, թեպետ, տվյալ պարագայում, խոսքը կոնկրետ գործողություններին չի վերաբերում, որոնք պետք է իրականացվեն: Դա չի լինի, եթե չհաջողվի համաձայնության հասնել գլխավոր թեմաներով»,- ընդգծեց Վրաստանի նախագահը:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

յան կառույցներին ինտեգրման, Բրյուսելում ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթաժողովի եւ երկու երկրների միջեւ պաշտպանության եւ անվտանգության ոլորտում առաջիկա համագործակցության հեռանկարների հետ առնչվող հարցեր:

Գիորգի Կվիրիկաշվիլին ամերիկյան կողմին շնորհակալություն հայտնեց պաշտպանունակության մակարդակի բարձրացման նախագծի, այդ ուղղությամբ իրականացվող զորավարժությունների կազմակերպմանը ցուցաբերած աջակցության համար: Հանդիպմանը վարչապետը նշեց, որ ՆԱՏՕ-ին անդամակցությունը երկրի ինչպես արտաքին, այնպես էլ՝ անվտանգության քաղաքականության կարեւորագույն առաջնահերթությունն է: Նրա խոսքով, Վրաստանում իրականացվող բարեփոխումները եւ ձեռքբերումները հիմնված են ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության կողմից ճանաչված արժեքների, չափորոշիչների վրա:

Իր հերթին, ամերիկյան գեներալը վրացական կողմին շնորհակալություն հայտնեց միջազգային խաղաղասիրական գործողություններում վրաց զինծառայողների մասնակցության կապակցությամբ եւ կրկին վավերացրեց ԱՄՆ-ի եւ ալյանսի Վրաստանի տարածքային ամբողջականության պաշտպանությանն ուղղված դիրքորոշումը: Վրաստանի վարչապետը հույս հայտնեց, որ ալյանսի առաջիկա գագաթաժողովում գործընկեր երկրները, ըստ արժանվույն կգնահատեն Վրաստանի կողմից ձեռք բերված առաջընթացը, եւ կընդունեն որոշում, որն է՛լ ավելի կխորացնի Վրաստան-ՆԱՏՕ համագործակցությունը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՆՎՃԱՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԵՎ ԶԵՂՉՈՎ՝ ԱՆՁՆԱԳԻՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎՐԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ




***Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու նախաձեռնությամբ, մայիսի 15-ից արտասահմանում գտնվող Վրաստանի քաղաքացիները կարող են անվճար ստանալ անձնական վկայականներ, իսկ անձնագրերը՝ զեղչ գներով՝ 50 դոլարով:***

Ինչպես հայտարարեց Թեա Ծուլուկիանին, անձնական վկայականների անվճար հանձնումը ուժի մեջ կլինի երեք ամսվա ընթացքում, իսկ անձնագիրը՝ երկու ամսվա ընթացքում: Սույն նախաձեռնությունը չի նախատեսում որեւէ սահմանափակում, այդ թվում՝ նաեւ տարիքային սահմանափակում:

Արդարադատության նախարարի խոսքով, նախաձեռնության նպատակն է՝ հստակեցնել 2018 թվականի համար նախատեսված նախագահական ընտրությունների ընտրական ցուցակները եւ դրանցում ներառել արտասահմանում գտնվող Վրաստանի քաղաքացիների հուսալի կենսաչափական տվյալները: «Բացի այդ, անձնագրի կամ անձնական վկայականի ժամկետի սպառումից հետո, արտասահմանում գտնվող Վրաստանի քաղաքացիները չեն կարող իրականացնել վարույթներ, հատել սահմանը, զրկվում են Վրաստանի պետության կողմից ներկայացված էլեկտրոնային սպասարկումներից օգտվելու հնարավորությունից: Տվյալ նախաձեռնությունը նրանց կօգնի լուծել այդ հիմնախնդիրը»,- ընդգծեց Թեա Ծուլուկիանին:

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

## ԳՈՒԲԱԶ ՍԱՆԻԿԻՁԵ. «ԲԱՑԱՌՎԱԾ ՉԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՁ ՊԱՇՏՈՆ ԱՌԱՋԱՐԿԵՆ»

***Ինչպես արդեն հաղորդել ենք, Հայաստանի նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է մոտ ժամանակներս Վրաստան այցելելու իր մտադրության մասին: «Որքան հնարավոր է՝ շուտ Վրաստան եմ այցելելու: Ներկայումս ընթացքի մեջ են այցի կազմակերպչական հարցերը»,- լրագրողներին հայտարարել էր Հայաստանի վարչապետը:***



Ինչպես տեղեկացրել է վրացական **«Ռեզոնանսի»** թերթը, Հայաստանի նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանը բարեկամական հարաբերություններ ունի վրաց ճանաչված քաղաքագետ Գուբազ Սանիկիձեի հետ: Պարբերականի տեղեկատվությամբ, բացառված չէ, որ նրան Հայաստանի նոր վարչակազմում պաշտոն առաջարկեն:

«Նիկոլ Փաշինյանին ճանաչում եմ 2014 թվականից, երբ Հայաստան էի մեկնել խորհրդարանական պատվիրակության կազմում: Նիկոլ Փաշինյանն այն ժամանակ Հայաստանի խորհրդարանական ընդդիմությունն էր ներկայացնում: Դրանից հետո, մի քանի անգամ հանդիպեցինք, նա Թբիլիսի էլ եկավ»,- **«Ռեզոնանսի»** հետ հարցազրույցում հայտարարեց Գուբազ Սանիկիձեն եւ հավելեց. «Նա բավական համեստ մարդ է, կրթված, մարտնչող եւ սկզբունքային: Նա լավ է տրամադրված Վրաստանի հանդեպ եւ գտնում է, որ Վրաստանի ու Հայաստանի միջեւ հարաբերությունները պետք է է՛լ ավելի խորացվեն եւ վերածվեն ռազմավարական համագործակցության»:

«Ինչ վերաբերում է Հայաստան իմ այցելությանը եւ այնտեղ պաշտոն զբաղեցնելուն, ապա, իրավիճակի կարգավորումից հետո, անպայման կմեկնեմ Երեւան եւ նրան կշնորհավորեմ հաղթանակի առիթով: Ինչ վերաբերում է պաշտոնին, ապա դա կախված կլինի իրավիճակից»,- նշեց Գուբազ Սանիկիձեն՝ ավելացնելով, որ ինքը Վրաստանում Նիկոլ Փաշինյանի հետ չի հանդիպի: «Ես նրա հետ անձնական հանդիպում կունենամ»,- ասաց Գուբազ Սանիկիձեն:



ԻՍՐԱՅԵԼ

### ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԳԱԶԱՅԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ

*Մայիսի 14-ին, Իսրայելի եւ Պաղեստինի Գազայի հատվածի սահմանային գոտում, ընդհարումներ սկսվեցին իսրայելական բանակի եւ պաղեստինյան ցուցարարների միջեւ: Դիմակայությունը սկսվեց նրանից հետո, երբ ԱՄՆ-ի դեսպանատունը Թել Ավիվից փոխադրվեց Երուսաղեմ՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ անցյալ տարվա դեկտեմբերի 6-ի որոշմանը համապատասխան:*

*Նշենք, որ, Գազայում «Վերադարձի երթի» շրջանակներում, զանգվածային ելույթները չեն դադարում մարտի վերջից, երբ պաղեստինցիները նշում էին Հողի օրը: Ընդամենը, բողոքի ակցիաների սկսվելուց հետո, զոհվել է 59 պաղեստինցի, վերքեր է ստացել ավելի քան 2,2 հազար մարդ:*

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱՆԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐՔԸ ԿՊԱՇՏՊԱՆՎԻ

*ԵՄ-ի գագաթաժողովի մասնակիցները որոշում են ընդունել՝ պաշտպանել իրանական միջուկային ծրագրի վերաբերյալ գործարքը եւ եվրոպական ձեռնարկությունները պաշտպանել ԱՄՆ-ի գործողություններից: Այդ մասին հայտարարեց Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը:*

*Մայիսի 16-ին ԵՄ-ի երկրների ղեկավարներն աշխատանքային ընթրիքի ընթացքում քննարկել են Իրանի շուրջ ստեղծված իրադրությունը: «2015 թվականի միջուկային համաձայնագիրը խաղաղության ու անվտանգության կարեւոր բաղադրիչ է տարածաշրջանում, եւ մենք որոշել ենք այն պաշտպանել՝ ինչպիսին էլ որ լինի ԱՄՆ-ի որոշումը: Մենք խոստացել ենք ձեռնարկել քաղաքական միջոցներ, որոնք մեր ձեռնարկություններին թույլ կտան մնալ Իրանում»,- ասաց նա: Ֆրանսիայի նախագահը նաեւ կարծիք է հայտնել, որ Իրանի հետ միջուկային գործարքն անհրաժեշտ է լրացնել եւ ընդլայնել, որպեսզի այն ներառի հրթիռային խնդրի լուծման ուղիները եւ տարածաշրջանում Իրանի դերին վերաբերող հարցերը:*

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՐԵԱ

### ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՆԴԻՊԵԼ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

*ԿԺԴՀ-ն կարող է վերանայել ԱՄՆ-ի հետ գագաթաժողովի շուրջ ձեռքբերված համաձայնությունը, եթե նա շարունակի պահանջել միակողմանի կարգով Կորեական թերակղզու միջուկազերծումը: Մայիսի 16-ին այս մասին հայտարարել է ԿԺԴՀ-ի արտգործնախարարության ղեկավարի առաջին տեղակալ Կիմ Գե Գվանը:*

*Նշենք, որ նախօրեին ԿԺԴՀ-ի իշխանությունները չեղյալ են հայտարարել Սեուլի հետ մայիսի 16-ին նախատեսված բանակցությունները, քանի որ անցած ուրբաթ օրը սկսվել են Max Thunder ամերիկա-հարավկորեական ռազմաօդային զորավարժությունները: Փհենյանը նաեւ հարցականի տակ է դրել ԱՄՆ-ԿԺԴՀ գագաթաժողովի անցկացման հարցը:*

*Պետդեպարտամենտի ներկայացուցիչ Հիզեր Նոյերթը լրագրողներին հայտարարել է, որ Վաշինգտոնը Փհենյանից ոչ մի կարգի ծանուցումներ չի ստացել Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընի հետ ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի հանդիպումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ: Նոյերթն ընդգծել է, որ բանակցությունների նախապատրաստումը կշարունակվի:*

Ճարբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ
ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

## ԴՄԻՏՐԻ ՔՈՒՄՍԻՇՎԻԼԻ. «ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 5,6 ՏՈԿՈՍ»

***Ընթացիկ տարվա առաջին եռամսյակի տնտեսական գործունեության հանրագումարմանը նվիրված մամլո ասուլիսում, առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլին հայտարարեց, որ ընթացիկ տարվա մարտին համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) աճը կազմել է 5,6 տոկոս:***



Անցյալ տարվա համեմատությամբ, ընթացիկ տարվա մարտին Վրաստանում գրանցված ձեռնարկություններում շրջանառությունն ավելացել է 12,1 տոկոսով:

Խոսելով տնտեսական վերոնշյալ աճի մասին, Դմիտրի Քումսիշվիլին նշեց, որ դա պայմանավորող հանգամանքներից մեկը զբոսաշրջության զարգացումն է:

- Միջազգային զբոսաշրջությունից եկամուտներն ավելացել են: Միայն մարտին այդ ոլորտի եկամուտներն ավելացել են 31,3 տոկոսով եւ կազմել 236,5 միլիոն դոլար: Զբոսաշրջության բաժինը տնտեսական աճի գործում կազմում է 3,3 տոկոս,- հայտարարեց առաջին փոխվարչապետը:

Նրա խոսքով, ավելացել է նաեւ դրամական փոխանցումների ծավալը: Այն կազմել է 110,1 միլիոն դոլար:

Դմիտրի Քումսիշվիլու հայտարարությամբ, ընթացիկ եւ ծրագրված կառուցվածքային բարեփոխումները կնպաստեն ՀՆԱ աճին: Միաժամանակ, Վրաստանի կառավարությունն ակտիվորեն գործում է փոքր եւ միջին գործարարության զարգացման, ֆինանսական աղբյուրներին դրանց մատչելիության ավելացման, նորամուծությունների խրախուսման ուղղությամբ:

Նշենք, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում տնտեսական աճը կազմել է 5,2 տոկոս:



### ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑԸ

*Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի հրամանագրով, հաստակեցվել է հանրային դպրոցներում ամառային արձակուրդների ժամանակացույցը: Ըստ այդ հրամանագրի, առաջին դասարանցիների ամառային արձակուրդը սկսվում է մայիսի 25-ին, երկրորդից մինչեւ 11-րդ դասարանցիների արձակուրդը՝ հունիսի 15-ին, իսկ մայիսի 18-ին հնչեց ավարտական զանգը 12-րդ դասարանցիների համար:*

*Նշենք, որ նոր ուսումնական տարին Վրաստանում կմեկնարկի սեպտեմբերի 17-ին:*

### ՆԱՏՕ-Ի ՌԱԶՄԱՆԱՎԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Մայիսի 14-ին ՆԱՏՕ-ի երկրորդ մշտական ռազմածովային խմբի (SNMG2) չորս նավ ժամանել է Վրաստանի Փոթի նավահանգիստ:*

*Ինչպես հայտնել են Փոթիի քաղաքապետարանից, նավահանգիստ մտած նավախմբի կազմում են ֆլագմանական նավը՝ HMS Duncan (Մեծ Բրիտանիա) էսկադրային ականակիրը, TCG Gemlik (Թուրքիա) ֆրեգատը, BGS Drazki (Բուլղարիա) ֆրեգատը RS Regele Ferdinant (Ռումինիա) ֆրեգատը:*

*Այցի շրջանակում՝ SNMG2-ի հրամանատարության ներկայացուցիչները՝ հրամանատար Մայքլ Ութլիի գլխավորությամբ, կայցելեն Վրաստանի սահմանապահ ոստիկանության առափնյա պահպանության բազա, ինչպես նաեւ հանդիպումներ կանցկացնեն սահմանապահ ոստիկանության պետի եւ առափնյա պահպանության դեպարտամենտի ղեկավարության հետ:*

### ԱՎԵԼԱՑՎԵԼ Է ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի վիճակագրության ազգային ծառայությունը, 2018 թվականի անցած ժամանակահատվածում Վրաստանում կենսական նվազագույնը ավելացվել է եւ աշխատունակ տղամարդու համար հունվարին այն հասցվել է 175, իսկ փետրվարին՝ 175,4 լարիի: Այդ ցուցանիշը, 2017 թվականի նույն ժամանակի համեմատությամբ, ավելացել է 7-9 լարիով:*

*Վիճակագրական ծառայության տվյալներով, մեկ մարդու կենսական նվազագույնը կազմել է 155,3 լարի, երկու հոգուց բաղկացած ընտանիքի համար՝ 248,5 լարի, երեք հոգուց բաղկացած ընտանիքի համար՝ 279,6 լարի, չորս հոգուց բաղկացած ընտանիքի համար 310,7 լարի, հինգ հոգուց բաղկացած ընտանիքի համար՝ 349,5 լարի: Վեց եւ ավելի անդամ ունեցող ընտանիքի համար՝ 413,2 լարի:*

ԿՐԹԱԿԱՆ

## ՀԱՅՏՆԻ Է ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը հրապարակել է 2017-2018 ուստարվա 12-րդ դասարանի քննությունների անցկացման ժամանակացույցը:***

2018 թվականին դպրոցականների համար նախատեսված քննությունները կանցկացվեն փոխված ձեւաչափով: Դրա մասին հայտարարել է Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տնօրեն Մայա Միմինոշվիլին:

Թեստի ավարտին՝ աշակերտը էկրանին ոչ թե կտեսնի իր հավաքած միավորը, այլ այն, թե հավաքել է նվազագույն 5,5 միավորից շատ կամ քիչ:

Ըստ Մայա Միմինոշվիլու, ավարտական քննությունները հաղթահարելու համար, պետք է պատասխանել 15 պարզ հարցի:

Այս տարի նույնպես 11-րդ եւ 12-րդ դասարանի աշակերտների քննության առարկաների ցանկը մնում է նույնը:

Մայիսի 20-ին կանցկացվի՝ «Վրաց լեզու եւ գրականություն», «Վրացերենը՝ որպես երկրորդ լեզու» եւ «Կենսաբանություն», 22-ին՝ «Պատմություն» եւ «Ֆիզիկա», 23-ին՝ «Մաթեմատիկա» եւ «Ֆիզիկա», իսկ 24-ին՝ «Քիմիա» առարկաների քննությունները:

Ավարտական քննություններն այս տարի նույնպես կանցկացվեն երկու փուլով՝ 11-րդ եւ 12-րդ դասարանցիների համար: 11-րդ դասարանի աշակերտները կհանձնեն այն առարկաների քննությունները, որոնց ուսուցումը կավարտվի («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» եւ «Աշխարհագրություն»), իսկ մնացած չորս առարկաները կհանձնեն դպրոցն ավարտելու ժամանակ:

Քննությունները կանցկացվեն համակարգչին հարմարեցված վրացական թեստերի մոդելով:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՕՐԸ

### ԵՐԿՈՒ ԻՐԱՐԱՄԵՐԺ ԱԿՑԻԱՆԵՐ՝ ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ

***Մայիսի 17-ին Վրաստանը նշեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի կողմից մի քանի տարի առաջ նախաձեռնած ընտանիքի սրբության օրը:***

Նշենք, որ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի կողմից նախաձեռնած Ընտանիքի սրբության օրվա ընտրությունը մայիսի 17-ին պատահական չէր, քանի որ այդ օրը հայտարարվել է սեռական փոքրամասնությունների պաշտպանության միջազգային օր:

Տոնական երթը մեկնարկեց Վարդերի հրապարակից՝ անցնելով Ռուսթավելու պողոտայով, ավարտվեց Սուրբ Երրորդության տաճարում, հատուկ հոգեւոր արարողությամբ:

Այդ օրվա համար իրենց միջոցառումներն էին ծրագրել նաեւ Վրաստանում գործող սեռական փոքրամասնության նեկայացուցիչները: Ի հակադրություն նրանց, իրենց միջոցառումները ծրագրեցին նաեւ «Վրացական երթ» եւ «Վրացական առաքելություն» ազգայնական կազմակերպությունները: Հնարավոր դիմակայությունը կանխելու համար երկրի ուժային կառույցները հայտարարել էին մոբիլիզացիա: Հենց ուժայինների ջանքերով էլ կանխվեց ազգայնական կազմակերպությունների եւ սեռական փոքրամասնության ներկայացուցիչների ընդհարումը Վրաստանի կառավարության գրասենյակի հարակից տարածքում: Թեպետ միջադեպերից խուսափել չհաջողվեց: Առանձին տեղերում նկատվեցին ընդհարումներ: Իրավապահների կողմից հասարակական կարգուկանոնի խախտման մեղադրանքով ձերբակալվել է մոտ մեկ տասնյակ մարդ:

## ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՐԱԾ ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

***Մայիսի 12-ի լույս գիշերը, Թբիլիսիի «Բասիանի» եւ «Գալերի» գիշերային ակումբներում Վրաստանի ուժային կառույցները, թմրանյութերի տարածման դեմ պայքարի շրջանակներում, անցկացրին հատուկ գործողություն, որի արդյունքում ձերբակալվել էին թմրանյութերի տարածման մեջ կասկածվող անձինք:***

Ի պատասխան հատուկ գործողության, Թբիլիսիի կենտրոնում՝ խորհրդարանի շենքի դիմաց բողոքի ակցիա անցկացվեց: Ցուցարարների կարծիքով, այցելուները ենթարկվել են բռնության եւ նվաստացման:

Երկու օր տեւած ակցիայի ընթացքում ցուցարարները հանդիպում ունեցան ՆԳ նախարարի հետ: Հանդիպմանը որոշվեց մանրամասն ուսումնասիրել տեղի ունեցածը եւ ուժայինների կողմից իշխանության չաहարկման դեպքում, մեղավորներին պատժի ենթարկել:

Տեղի ունեցածի կապակցությամբ որոշում է ընդունվել՝ օրենսդիր մարմնում արագացնել թմրանյութերի քաղաքականության օրինանախագծի մշակումն ու ընդունումը:

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՓՈՒԼԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է




Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության «Մենք վճարում ենք հարկերը եւ հիմնում անվտանգ ապագա» նախագծի շրջանակներում, մայիսի 15-ին Սուխումիի պետական համալսարանի եւ Վրաստանի Դավիթ Աղմաշենեբելու անվան համալսարանի ուսանողների համար «Կարմիր կամուրջ» սահմանային անցումակետում, «Թբիլիսի» ձեւակերպման տնտեսական գոտում եւ Իսանի-Սամգորիի սերվիս-կենտրոնում անցկացվեց հանրակրթական սեմինար:

Ուսանողները տեղում ծանոթացան եկամուտների ծառայության վերոնշյալ օբյեկտներում տեղակայված տեխնոլոգիական նորույթներին, մատուցվող ծառայություններին եւ ընթացակարգերին: Եկամուտների ծառայության աշխատակիցներն ուսանողներին, որպես ապագա հարկատուների, մանրամասն տեղեկատվություն ներկայացրին հարկային եւ մաքսային համակարգերի գործառության ու նշանակության մասին:

Սեմինարին մասնակցեց շուրջ 30 ուսանող:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունն ապագա հարկատուների համար ծանոթության եւ հանրակրթական բնույթի նախագծեր իրականացնում է ամեն տարի: Այս տարի նախագիծը մեկնարկեց ապրիլի 12-ին: Ծրագրին մասնակցեց երկրի ավելի քան 30 բուհերի ուսանող:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

# ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՐԲԵՔ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՅՍՔԱՆ ԱԶԱՏ ՉԻ ԵՂԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հարված էր ու ոչնչացված:

Իր խոսքում, Բիձինա Իվանիշվիլին անդրադարձավ տնտեսական ցուցանիշներին եւ նշեց, որ անմիջական օտարերկրյա ներդրումներն անցյալ տարի գերազանցեցին Վրաստանի պատմական նշանագիծը: «Վերջին հինգ տարիների ընթացքում, տնտեսական աճի տեսանկյունից, Վրաստանը տարածաշրջանի առաջատարն է, իսկ Արժութային հիմնադրի հրապարակված վերջին տվյալներով, առաջիկա վեցամյա տնտեսական աճի կանխագծումներով, Վրաստանն առաջատարն է ոչ միայն տարածաշրջանում, այլեւ Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի երկրների միջեւ»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին:

## ՎՐԱՍՏԱՆԸ ԵՐԲԵՔ ԱՅԴՔԱՆ ՄՈՏ ՉԻ ԵՂԵԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՆԱՏՕ-ԻՆ

«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության արտահերթ հինգերորդ համագումարի իր խոսքում, կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին, անդրադարձավ Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի փոխհարաբերություններին, ընդգծելով, որ երկիրը երբեք այդքան մոտ չի եղել այդ երկու կազմակերպությունների հետ ինտեգրման գործընթացում: «Մենք միասնական եվրոպական ընտանիքի ասոցիացված անդամն ենք եւ այդ փաստն արդեն իրավաբանորեն վավերացվել է: Գործարկվել է Եվրամիության հետ ազատ առեւտրի եւ անայցեգրային պայմանակարգը, որից արդեն բազում մարդիկ օգտվել են: Նշանակալիորեն ամրացվել եւ խորացվել են Վրաստանի փոխհարաբերությունները մեր ռազմավարական դաշնակից Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ»,- նշեց Բիձինա Իվանիշվիլին:

## ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ԿԱՐԳԱՎՈՐՎԵԼ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իր խոսքում, Բիձինա Իվանիշվիլին հիշեցրեց, որ դեռեւս 2012 թվականին «Վրացական երազանք» կոալիցիան հայտարարել էր Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների կարգավորման իր մտադրության մասին: Անդրադառնալով այդ թեմային, կուսակցության նորընտիր նախագահն ասաց. «Մենք մասնակիորեն կարողացանք թուլացնել լարվածությունը՝ Ռուսաստանի հետ փոխհարաբերություններում, եւ հուսով ենք, որ միջազգային գործընկերության օգնությամբ կկարողանանք անցնել փոխըմբռնման եւ երկխոսության ռեժիմի, ինչը մեր երկրի առջեւ ծառացած խնդիրների քայլ առ քայլ կարգավորման հեռանկարն է ստեղծում»:

## ԻՆՉՈՒ ԿՐԿԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսելով կրկին քաղաքականության ասպարեզ իր վերադարձի մասին, Բիձինա Իվանիշվիլին ասաց, որ մի քանի տարի առաջ, երբ հայտարարեց քաղաքականությունից հեռանալու մասին, նշել էր, որ ինքը կվերադառնա ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: «Ինչու որոշեցի հիմա կրկին գլխավորել այն քաղաքական կուսակցությունը, որը հիմնեցի 2012 թվականին եւ, ժողովրդի հետ միասին, իրականացրի իմ կյանքի ամենակարեւոր, ամենապատվավոր առաքելությունը՝ պարտության մատնեցի, եւ համոզված եմ, որ երկրի ղեկավարությունից առընդմիշտ հեռացրինք բռնությամբ եւ ժողովրդի ճնշմամբ առաջնորդվող իշխանությունը»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին եւ թվարկեց քաղաքական ասպարեզ վերադառնալու երեք հանգամանքները:

«Առաջին հանգամանքը՝ օբյեկտիվորեն առկա ոչ բարեկարգ սոցիալ-տնտեսական իրավիճակն է եւ, առանց այդ էլ ծանր իրավիճակի առավել սուր, արհեստականորեն լարվածության առաջացման փորձերը: Երկրորդ՝ ընդդիմախոսների մեծամասնության կողմից ծագող ծայրաստիճան ապակայունացնող ազդակը եւ, ի վերջո, երրորդ՝ իշխանության ներսում առկա, ճիշտ է՝ թույլ, սակայն բացարձակապես ավելորդ անհիմն ու երկրի շահերին վնասող տարաձայնությունը»:

## ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ ԱՌԿԱ Է ՈՐՈՇԱԿԻ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Պարզաբանելով իր վերադարձը պայմանավորող հանգամանքները, Բիձինա Իվանիշվիլին նշեց, որ, երկրի առջեւ ծառացած բազում մարտահրավերների պայմաններում, իշխանության ներսում առկա է որոշակի դիմակայություն, ինչը դուրս է եկել քաղաքական թիմի համար ընդունելի ժողովրդավարության ու տարակարծության շրջանակներից: Ըստ Իվանիշվիլու, դա հենց քաղաքական ասպարեզ վերադառնալու երրորդ հանգամանքն է: «Այսօր ես մտադիր չեմ մանրամասն ներկայացնել իշխանության գործունեության հաշվետվությունը, առավել եւս՝ դա իմ իրավասություններին մեջ չի մտնում, սակայն իմ պարտքն եմ համարում քաղաքացիական պատասխանատվությամբ եւ հպարտությամբ ընդգծել այն հիմնարար համապետական ձեռքբերումները, որոնց իշխանությունը հասել է պատմականորեն սեղմ ժամկետում, ոչ լիարժեք վեց տարիների ընթացքում»,- ասաց Բիձինա Իվանիշվիլին:

## «ԼԻՎՈՒԹՅԱՄԲ ՔԱՋԱՏԵՂՅԱԿ ԵՄ ՇԱՐՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ»

Արտահերթ համագումարում, իր ելույթում, Բիձինա Իվանիշվիլին անդրադարձավ երկրում ստեղծված սոցիալական իրավիճակին՝ հայտարարելով, որ ինքը քաջատեղյակ է այն բարդություններին, որոնք ծառացած են շարքային քաղաքացիների առջեւ: «Մենք դեռեւս չենք հաղթահարել տնտեսական այն ծանր իրավիճակը, որն առաջացել է անկախության համար պայքարում՝ զարգացած, այդ թվում՝ արյունահեղ դիմակայությունների արդյունքում ծագած հիմնախնդիրներից»,- ասաց Բիձինա Իվանիշվիլին՝ հավելելով, որ դեռեւս չեն սպիացել քաղաքացիական պատերազմի վերքերը, եւ ներգրավվել էինք տարածքային ամբողջականության համար պատերազմում, որի արդյունքում ստացանք ռուսական բռնազավթում եւ բռնագաղթվածների երկու մեծ ալիք: «Իրականում, պետության կառավարման ժամանակակից ավանդույթների բացակայության արդյունքում, ծագած քաոսը՝ հանգեցրեց սոցիալ-տնտեսական ծանրագույն անկման, եւ աղքատությունը դարձավ զանգվածային երեւույթ: Մինչ օրս էլ սրությամբ է դրված գործազրկության հիմնախնդիրը, աշխատողների փոքր աշխատավարձը, կենսաթոշակների հիմնախնդիրը: Ցավոք, օրեցօր կյանքը թանկանում է»,- ընդգծեց Բիձինա Իվանիշվիլին:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՃԿԱՃՈՒՄԻՃ ՆԱՀԱՆՋ ՉԻ ԼԻՆԻ»

## ԿՈՄԵՐՑԻՈՆ ԲԱՆԿԵՐԻ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՕՆԼԱՅՆ ՎԱՐԿԵՐԻ ՎՐԱ

*Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն, երկրում նահանջ չի լինի՝ մեծ պարտքի հիմնախնդրի կարգավորման եւ ֆինանսական հատվածի համար նոր կարգավորումների հաստատմանն ուղղված բարեփոխումներից:*



Նախարարի խոսքով, պարտքի զգալի ծավալը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ ընտանիքների մեծ մասն իրենց եկամուտների նշանակալի հատվածն ուղղում են վերցրած վարկերի սպասարկմանը, այլեւ՝ նրանով, որ դա նվազեցնում է ձեռներեցությամբ եւ բիզնեսով բնակչության զբաղվելու ցանկությունը:

- Երբ մենք խոսում ենք միջին եւ փոքր ձեռներեցության աջակցության մասին, դա առանձին բարեփոխում է, դրա համար անհրաժեշտ է իրավական առանձին փաթեթ եւ հարկային նոր նախաձեռնություն: Պարտքի մեծ ծավալն այլ ուղղություն է, եւ պետք է օգտագործել իրավական այլ մեխանիզմներ: Արդյունքում, բոլոր բարեփոխումները մի նպատակի են ծառայում՝ Վրաստանում աղքատության վերացմանը: Հետեւաբար, այս բոլոր բարեփոխումներն առնչվում են միմյանց: Այսօր մեր համաքաղաքացիների մեծ մասը հայտնվել է սեւ ցուցակում, հետեւաբար, նրանք հայտնվել են տնտեսական պակաս գործունեության գոտում: Ելնելով երկրի մասշտաբներից, մեր շուկան փոքր է, եւ դրան ավելանում է նաեւ այն, որ հարյուրավոր մարդիկ զրկվել են ձեռներեցության զարգացման եւ ընտանիքը պահելու հնարավորությունից,- ասաց Մամուկա Բախտաձեն:

Նրա խոսքով, 2018 թվականի մայիսի 7-ից ուժի մեջ է մտել կոմերցիոն բանկերի համար նոր կարգավորումը, ըստ որի, բանկերը պարտավոր են, վարկեր տրամադրելուց առաջ, լիարժեք վերլուծության ենթարկել դիմորդների վճարունակությունը: Նման վարկերի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի բանկի հիմնարար կապիտալի 25 տոկոսը: Ավելին, որոշակի կարգավորում է իրականացվել նաեւ անշարժ գույքի գրավադրմամբ վարկերի ստացման գործընթացի վրա: Ըստ նոր կարգավորման, անշարժ գույքի դիմաց տրված վարկերի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի բանկի հիմնարար կապիտալի 15 տոկոսը: Ընդ որում, վարկի հանձնման դեպքում, դիմորդի վճարունակության լիարժեք ստուգումը պարտադիր չէ, թեպետ նման վարկերի երաշխիքը չպետք է գերազանցի 50 տոկոսը:

Ըստ Մամուկա Բախտաձեի, կոմերցիոն բանկերի համար ներդրվող նոր կարգավորումները տարածվում են նաեւ արագ եւ օնլայն վարկերի վրա: Նախարարի խոսքով, ողջ ֆինանսական համակարգի համար ներդրվում է կարգավորման ընդհանուր համակարգ:

- Բանկային հատվածն ուներ իր կարգավորումները, ոչ բանկային հատվածը՝ միկրոֆինանսական կազմակերպությունները՝ իրենցը, իսկ օնլայն վարկերի կարգավորումն իրականացվում էր անմիջականորեն նրանց կողմից մշակված կարգով: Արդյունքում, ընդհանուր կարգավորումների համակարգը բացակայում էր, եւ դա դարձավ ծագած հիմնախնդրի գլխավոր պատճառը: Ելնելով դրանից՝ նոր կարգավորումները կառնչվեն բոլորին, այդ թվում՝ նաեւ արագ եւ օնլայն վարկերի համակարգերին, քանի որ այդ ուղղությամբ ներկայացուցիչների ծառայությունների արդյունքում, Վրաստանում ծագեցին պարտքի մեծ ծավալի հիմնախնդիր,- նշեց Բախտաձեն:

Նշենք, որ մայիսի 7-ից ուժի մեջ է մտել Վրաստանի Ազգային բանկի կարգադրությունը, ըստ որի, փոփոխություններ են կատարվել «Կոմերցիոն բանկերում վարկերի կենտրոնացման եւ խոշոր ռիսկերի մասին» կանոնադրությունում:

*Պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՑԱՆԿՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

*Վրաստանի կառավարության որոշմամբ հիմնվել է նոր կազմակերպություն, որը կզբաղվի կարիքավոր քաղաքացիներին անվճար դեղորայքի տրամադրմամբ:*



Այս մասին Վրաստանի կառավարության նիստում հայտարարեց երկրի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն:

Ամբուլատոր դեղորայքի մատչելիության պետական ծրագիրն իրականացվում է Վրաստանի կառավարության կողմից 2017 թվականի հուլիսի 1-ից: Ըստ վերջին տվյալների, սույն ծրագրից օգտվել է Վրաստանի մոտ 600 000 քաղաքացի, ովքեր համարվում են սոցիալապես անպաշտպան անձինք կամ՝ քրոնիկ հիվանդություններով միայնակ կենսաթոշակառուներ:

Ավելի վաղ՝ Վրաստանի Առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարարությունը հայտարարել էր, որ պետական այս ծրագրից չի օգտվել այնքան մարդ, որքան նախատեսված էր: Ծրագրի շահառուների թվաքանակի ավելացման համար նրա զարգացմամբ կզբաղվի նոր կազմակերպություն, որը հիմնադրվել է մայիսի 3-ին:

Առողջապահության նախարարության նախնական տվյալներով, քրոնիկ հիվանդությունների բուժման ամենատարածված դեղամիջոցների քանակը պետք է ավելացնել 23-ից մինչեւ 50 անվանումով:

Առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն հիշեցրել է, որ դեղերի արժեքը ստեղծվում է արտադրողի գնից, բաշխման-մարքեթինգից, ինքնարժեքից եւ շահույթից: Նոր մոդելը, ըստ նրա, հնարավորություն կտա իրականացնել սոցիալական նախագիծ եւ նվազեցնել դեղերի արժեքը:

«Մի կողմից արտադրողը, արդեն հիմնված կլինի բոլորովին այլ պլատֆորմի ընկերության վրա, կանի զգալի զեղչեր եւ այդպիսի օրինակ մենք ունենք՝ հեպատիտ C-ի բուժման ծրագրի հետ կապված: Մյուս կողմից, պետությունը ակտիվորեն մասնակցում է բաշխման-մարքեթինգին, ինչը զգալիորեն կնվազեցնի ծախսերը»,- հայտարարեց Դավիթ Սերգեենկոն:

Ամբուլատոր դեղորայքի մատչելիության պետական ծրագիրը գործում է հարյուր հազարից ցածր սոցիալական միավորով կարգավիճակ ունեցող անձանց համար:

Պետական ծրագրի շրջանակներում, առաջին փուլում անվճար դեղեր են ստացել սիրտ-անոթային հիվանդություններ ունեցողները (բարձր ճնշում, սրտի անբավարարություն, կորոնար զարկերակների հիվանդություն), էնդոկրինոլոգիական հիվանդություններ (երկրորդ տեսակի շաքարախտ եւ վահանաձեւ գեղձի հիվանդություններ), բրոնխիալ ասթմա եւ քրոնիկ խանգարիչ թոքային հիվանդություն: